

ԳԱՂՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ, Հայագիտական ուսումնասիրություններ:
Գիրք Ա, Երևան, 1979, 540 էջ:

Գալուստ Տեր-Մկրտչյանը ներկայացուցիչն է հայագետների այն փայլուն սերնդի (Ղ. Ալիշան, Ն. Մառ, Ն. Աղոնց, Ֆ. Կոնիքի, Ֆ. Մակլեր, Հ. Տաշյան, Գ. Խալաթյան, Մ. Արեղյան, Հ. Աճառյան, Հ. Մանանդյան և այլք), որի ջանքերով XIX դարի 80-ական թթ. սկսած հայագիտությունը թեկնածու է իր զարգացման նոր փուլը՝ կանգնելով ժամանակաշրջանի գիտության բարձր մակարդակի վրա: Հայագիտության շատ բնագավառներում իր ծանրակշիռ խոսքն ունի տաղանդավոր գիտնականը՝ Նշելի է մասնավորապես նրա կարևոր դերը հայ հին մատենագրության, աղբյուրագիտության ու քննադրարանության ասպարեզում:

Համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը լույս է ընծայել Գ. Տեր-Մկրտչյանի աշխատությունների առաջին ժողովածուն (տպագրության համար արդեն պատրաստ է նաև երկրորդ գիրքը): Դրանով կամքողջանա նշանավոր հայագետի գիտական ժառանգությունը, որն առանձին հոգվածներով ու մասերով տպագրվել է նախասովետական շրջանի գիտական հանդեսներում, մասնավորապես «Արարատ» ամսագրում, մասամբ էլ չի հրատարակվել:

Սույն հատորը կաղմել և խմբագրել են Պ. Հակոբյանն ու էմ. Պիվազյանը: Գրքի առաջաբանն ու ծանոթագրությունները գրել է Պ. Հակոբյանը:

Գրախոսվող գրքում ընդգրկված են անվանի հայագետի 1890—1900 թթ. գրած ավելի քան քսան աշխատություններ, որոնցից 3-ը («Հայկականը Ի», «Հայկականը <ԻԱ>» և «Ծափերի մասին») լույս են տեսնում առաջին անգամ (էջ 3): Նյութերը բերված են ամբողջությամբ՝ սկզբնագրերին՝ արագատ՝ բնագրաբանական, ուղղագրական, կետադրական և այլ բնույթի բոլոր անհրաժեշտ բարելավումներով (էջ 3):

Գրքի սկզբում տրվում է գիտնականի կյանքի և հայագիտական գործունեության համառոտ ակնարկը («Գալուստ Տեր-Մկրտչյանի կյանքն ու հայագիտական վաստակը», էջ 5—18): Մասնավորապես հայ պատմագիրների երկերի նրա իրականացրած քննական հրատարակություն-

ների առթիվ ասվում է. «Դասական ոճով կատարված այդ գործերը օրինակ դարձան հայ մատենագիրների աշխատանքների հետագա գիտական հրատարակությունների համար» (էջ 14): «Իսկ ինչ վերաբերում է նրա կազմած քննական բնագրերին և հայ մատենագիրների անհայտ երկերի հրատարակություններին, ապա դրանք՝ արդի տեքստաբանության սկզբունքներ, ինչպես ինչ՝ բոլորում են փայլուն քննություն, հաստատում ու ճշտում գիտնականի շատ կուսումներ» (էջ 18):

Հրատարակիչները, ըստ արժանվույն գնահատելով Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ժառանգությունը, նկատում են նրա թույլ տված որոշ «թերիներ և ոչ բավարար հիմնավորված դրույթներ», նաև՝ «կտրուկ, անընդունելի եզրահանգումներ» (էջ 4, հմմտ. էջ 18), բայց գտնում են, որ «այնուհանդերձ՝ պատկառելի հայագետի գիտական վաստակի մեծագույն մասը այսօր էլ պահում է իր արժեքը, դառնալով յուրօրինակ խորհրդատու արդի բանասերների համար, հայ հին մատենագրության ու պատմության առեղծվածները քննելիս» (էջ 18):

«Խորհնացու պատմության ուսումնասիրություն» (էջ 21—108) մեծաթեք աշխատության 6 հոդվածներում հեղինակը քննում է Խորհնացու «Պատմությանը» վերաբերող բազմաթիվ բարդ և կնճռոտ հարցեր:

Սրբորդ հոգվածում նրան հետաքրքրում է Խորհնացու «Պատմության» «չորրորդ գրքի» խնդիրը: Գիտնականը հանգում է որոշակի հետևություն. «Այսպիսով՝ մենք գալիս ենք այն համոզմանը, որ երբեք չէ եղել Խորհնացու չորրորդ գիրքը, ուրեմն և՛ դրա մասին հիշատակություն» (էջ 50): Քննելով Խորհնացու և Մարարասի հարաբերության հարցը, հեղինակը եզրակացնում է, որ Խորհնացու «Պատմության» մեջ Մարարասի բաժինն ավելի քիչ է՝ նրան վերագրվող մասի 1/3-ի չափ, իսկ 2/3-ը Մարարասից չի առնված (էջ 108):

«Խորհնացու ժամանակը որոշելու նոր փորձ» հոդվածին (էջ 109—112) հետևում է «Հայկականը Ա—ԺԲ», «Հայկականը ԺԳ—ԺԹ», «Հայկականը Ի», «Հայկականը <ԻԱ>» աշխատությունների շարքը (էջ 113—218): Քննվում են

և որենացու բնագրի թյուրընթերցված և թյուր-ըմբռնված առանձին բառերն ու դարձվածքները, մութ ու խրթին հատվածները («այրեցողք», «փախչողք ի ժառանգութենէ», «մօրին մեծի», «ղետն մեծ», «մայրաքաղաք», «Արարադ» և «Այրարատ», «Տիրանուն», «Կունդ Արամազդ», և այլն), արծարծվում են «Աղվեսագրքի» երեք առակների, «Հայելի վարուց ֆրանկացի», Ստ. Լեւոնցու թարգմանությունների, «Վարք Հա-րանցի» հարցերը:

Արդի բնագրարանության տեսակետից հատ-կապես հետաքրքիր է «Հայկական Ժ» հոդվա-ծը: Հայագետը խորենացու «Պատմության» ձե-ռագիր աղբյուրների դասակարգման առիթով խոսք է ասում ժամանակի բանասիրության մասին, «Հայկական Ի»-ում, նկարագրելով Մատենադարանի № 1545/4 (նոր համարը՝ 1875) ձեռագիրը, նա ուշադրություն է հրավի-րում պահպանակի այն հատվածին, որը վերա-բեռում է Փոքր Սոկրատի և խորենացու կա-պին, իսկ հաջորդ հոդվածում քննադատում է Բ. Գևորգյանի «խորենացուն խորենացով պետք է հասկանալ» աշխատությունը:

Տեր-Մկրտչյանի կազմած համեմատական բնագրերն իրենց առաջաբաններով, բանասի-րական ճշգրտումներով, վերականգնումներով, վերջանումներով, մեկնություններով ու բառա-քննությամբ այսօր էլ մնում են որպես բանա-սիրական աշխատանքի դասական նմուշներ: Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան», Անանիա Շիրակացու «Յաղագս ամպոց եւ նշա-նաց», «Յաղագս հարցման եւ լուծման», «Յա-ղագս շրջագայութեան երկնից», Ազաթանգեղո-սի «Յիշատակ դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից որք վկայեցին յՈւռհա» (էջ 219—239), որոնք առաջին անգամ իրապարակվեցին Գ. Տեր-Մկրտչյանի աշխատասիրությամբ՝ հայագիտու-թյան ակնհայտ նվաճումներ են:

Գիտնականը թողարկեցիների աղանդը գնա-հատում է որպես հայկական մտածողության մի այնպիսի դրսևորում, «որ դարձավ միջազ-գային և աշագին նշանակություն ստացավ մարդկային ընդհանուր պատմության մեջ» (էջ 219), «մասնագիտական զարմանալի հըմ-տությամբ» նա բացահայտում է Շիրակացու հաշվումների ու թվաբանական խնդիրների ա-ռեղծվածները, քննում Ազաթանգեղոսի բնագրի ու նրա աղբյուրների առնչությունների հար-ցերը և այլն: Նա ձգտում է «կազմելու և ունե-նալու համար սեփական կարծիք» (էջ 298), հետամուտ լինել պատմական ճշմարտությանը՝ «գործելով առանց նախաույալ կարծյաց և նպա-տակավոր դիտավորության կամ վերապահու-թյան» (էջ 325), քննադատում ու մերժում է

անշարժ ավանդապահականը և դրա՝ «անպայ-ման հերքողականը», ծայրահեղությունն ու միա-կողմանիությունը, գայթակղությունն ու ան-հիմն մերկացումը:

Աղբյուրագիտությունը հայագետի սիրած զբաղմունքներից մեկն էր: Նրա մեղվաջան աշ-խատանքի արդյունքներից գրքում (էջ 340—374) տեղ են գտել «Ղազար Փարպեցու ձե-ռագրերը» և «Փավստոսի ձեռագրերը» արժե-քավոր աղբյուրագիտական գործերը: Կարևոր հայագիտական նշանակություն ունի «Հայ մա-տենագրության հնագույն թվականները» (էջ 338—402) աշխատությունը: Այստեղ հեղինակն իր առջև խնդիր է դրել որոշել Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» և Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հայերեն թարգ-մանության ժամանակները:

Հնագիտությանն ու վիմագրությանը նվիրված բաժինը (էջ 403—434) ամփոփում է մի քանի փոքրածավալ աշխատություններ՝ «Արմավիր-յան նոր բեկնագիր», «Սարդարապատի բեկ-նագրի վերծանությունը», «Ուրարտյան բեկ-նագրերի լեզուն», «Նստոց» և «Աջից ձախ հայ գրություն»:

Հայ ազգագրության տեսակետից հետաքրքիր է «Ծակատագրի տոներ» հոդվածը (էջ 466—481), որտեղ հեթանոսական շրջանի հայկական սովորություններն ու հավատալիքները խմբա-վորված և քննված են չորս ամփոփ դրվագնե-րում՝ «Ա. Բուսականություն—ծառեր», «Բ. Ար-մատներ և ծաղիկներ», «Գ. Զուր», «Դ. Աստ-ղեր», ապա՝ «Վիճակի երգերը»: Վերջինում հեղինակն անդրադառնում է «Ջան գյուլում» կոչվող երգերին, բերում դրանց մի քանի ըն-տիր հատվածներ: Ժողովածուն եզրափակվում է «Ծաթերի մասին» հետաքրքիր դիտողություն պարունակող փոքր հոդվածով (էջ 482—483): Գիրքն ունի «Ծանոթագրություններ» (էջ 485—526), անձնանունների ու նկարների ցանկեր (էջ 527—538):

Ժողովածուն հայագիտական հետազոտություն-ների կենտրոնի հերթական հաջող հրատարա-կությունն է, այնուամենայնիվ մի քանի դիտո-ղության տեղիք է տալիս: Նման կարգի հայա-գիտական հրատարակությունները ցանկալի է, որ ունենան ավելի ընդարձակ գիտական առա-ջաբաններ: Հայ ժողովրդի ու նրա մշակույթի պատմության առանձին հարցերով այսօր հե-տաքրքրվում են ամենատարբեր զբաղմունք ու մասնագիտություն ունեցող բազմաթիվ ընթեր-ցողներ, այդ թվում և ոչ հումանիտար գիտու-թյունների ներկայացուցիչներ: Առաջաբանը նրանց կօգնե ամփոփ ու ամբողջական պատ-կերացում ունենալու գրքի հեղինակի հիմնա-

Ֆյան դրույթների ու դիտական հղրակադոթյունների մասին: Հնթերցողներին կողմնորոշելու համար հրատարակիչները թերևս ծանոթագրություններում կարող էին ավելի կոնկրետ ցույց տալ Գալուստ Տեր-Մկրտչյանի երկերում առանձին սխալները, վրիպումները, ինչպես և հնացած կարծիքները: Նյութի համակարգումն ակնառու դարձնելու և օգտագործման հարմարության համար լավ կլիներ, որ ժողովածուի

հիմնական ռաժիսներն ունենային ընդհանուր խորագրեր: Կարծում ենք տեղին չէ վերապահությունը անձնանունների ցանկում, եթե ոչ ծանոթագրություններում, ապա հեղինակի մեջբերած ձևագրային հիշատակարաններում առկա անձնանունների նկատմամբ, մանավանդ որ դրանց թիվը մեծ չէ:

Ռանասիր. դիտ. գոկտոր Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

ARMENIAN ART TREASURES OF JERUSALEM, *Edited by Bezalel Narkiss, In collaboration with Michael E. Stone, Historical survey by Avedis-K. Sanjian*, Massada Press, 1979, 176 pp., 194 ill.

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԳԱՆՁԵՐԸ, խմբագրությամբ Բեզալել Նարկիսի, Մայլ Ե. Սթոնի համագործակցությամբ, պատմական ուսումնասիրությունը Ավետիս Կ. Սանջյանի, Մասսադա հրատարակչություն, 1979, 176 էջ, 194 նկար:

Գրքերի ընթացքում Երուսաղեմում ապրող հայերը կառուցել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնցից շատերը կործանվել են կամ վերաշինվել:

Հանրահռչակ Ս. Հակոբյանց կաթողիկե տաճարը կառուցվել է 1142—1165 թթ. ընթացքում՝ խաչակրաց տիրապետության օրոք: Այժմ տաճարը ուշ եվրոպական շքեղ բարոկկոյի և հայկական ավանդական ճարտարապետության մի յուրօրինակ խառնուրդ է: Հայ մշակույթի համար խոշոր նշանակություն ունեն վանքի զանազանը պահպող գեղարվեստական բազմազան ստեղծագործությունները և գրադարանի ձևագրական հավաքածուն: Հարյուրամյակներ շարունակ Երուսաղեմ այցելած ուխտավորները Ս. Հակոբյանց վանքին են ընծայել ամենատարբեր իրեր, այդ նվիրատվություններից գոյացել է թանգարանային մի հսկա հարստություն: Ինչպես հայտնի է վանքի գրադարանի հայերեն գրչագիր մատյանների հավաքածուն իր մեծությամբ և կարևորությամբ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանից հետո երկրորդն է աշխարհում:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց հայկական վանքի թանգարանային արժեքների մասին տարբեր աղբյուրներում գրել են Գ. Հովսեփյանը, Ա. Բաումշտարկը, Գ. Միլլեն, Ս. Տեր-Ներսիսյանը, Զ. Փարսունյը, Տ. Ա. Իզմայլովան և ուրիշներ:

1969 թ. բրյուսելյանակ եգիպտագետ Ա. Մխիթարյանի աշխատասիրությամբ Երուսաղեմում հրատարակվեց այնտեղ բացված հայկական ցուցահանդեսի կատալոգը, որտեղ առաջին անգամ նկարագրվեցին և գունավոր ու սև-սպիտակ վերատպություններով գիտական շրջանա-

ռություն մեջ դրվեցին հայ արվեստի մի շարք նշանավոր ստեղծագործություններ:

Այս ուղղությամբ հաջորդ կարևոր քայլը եղավ անվանի գիտնական, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Ս. Տեր-Ներսիսյանի «Հայ արվեստը ակունքներից մինչև XVII դարը» աշխատությունը, որը հրատարակվեց Փարիզում 1977, 1978 թթ. Ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: Այդ երկասիրության մեջ առաջին անգամ հետազոտված էին Երուսաղեմում գտնվող հայկական ձևագրերի մոտ երեսուն նվազ հայտնի կամ բոլորովին անհայտ մանրանկարներ:

1979 թ. Հոլանդիայում Մասսադա հրատարակչությունը անգլերեն լեզվով լույս է ընծայել նշանավոր արվեստաբան Բեզալել Նարկիսի «Երուսաղեմի հայկական արվեստի գանձերը» գիրքը, որտեղ ներկայացված են հայ մշակույթի բազմաթիվ անդին մասունքներ: Գիրքը ձևաված է Ս. Տեր-Ներսիսյանին, առանց որի ուսումնասիրությունների, ինչպես նաև է հեղինակը, խնդրո առարկա աշխատությունը չէր կարող գրվել: Երկասիրության սկզբում գետնեղված է Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի հայկական հետազոտությունների բաժնի պրոֆեսոր Ա. Սանջյանի համառոտ ակնարկը «Երուսաղեմի հայկական համայնքը» խորագրով: Այստեղ սեղմ կերպով պատմվում է դարերի ընթացքում Երուսաղեմյանակ հայերի և բյուզանդացիների, արաբների, խաչակիրների, թուրքերի հարաբերությունների մասին՝ վերջիններիս գերիշխանության օրոք:

Ա. Սանջյանի ակնարկում թուցիկ կերպով մատնանշվում է հայերի մշակութային, մաս-